



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2107

Готмане - 1/2 нрл
Финансыте пезупте
интереснык 1904
1905

82

7-73

067-25 | 91x76

85-0

4770

այլ

ԿՕՆԱՆ - ԴՈՅԼ


Բ Ա Ն Ա Կ Ն

Ի Ն Չ Պ Է Ս Ա Ջ Ա Տ Ե Ց Ի

Էտիկն ժերարի արկածներէց



Թարգմանեց Տ. Վ.



Թ Ի Ը Լ Ի Ո — 1905

Արտատպած «Առեմայր» երկամսնայ Հանդիսից

«ԼՈՒՄԱՅ» Ի Խմբագրատանը վաճառուով են

ԳԻՒՏԱԿԱՆ ՔԱՆՆԱԳՐԱՆԵՐԻ ԱՂԱՆԵՆՆՅՈՒՄ

աշխատութիւնները.

1 Աղօթատետր Ե. ապ. 1903.	— 10
2 Կրօնի դասագիրք Թ. Կ. 1889 (սպառուած)	— 15
3 " " Բ. Կ. 1891	— 25
4 " " Գ. Կ. 1891	— 25
5 Տօմար և տօնացոյց Հայաստանի և Երևանի մարզերու համար 1894	— 5
6 Կարնոյ գաղթը. պատմական տեսութիւն 1891	— 10
7 Գրեան Հայոց պատմութեան գիրք Ա. — Բ. 1780—1834 Սահակ-Մարտիրոսի մրցանակին արժանացած 1893.	2 —
8 Գրեան Հայոց պատմ. գիրք Գ. Սիմօն Կաթողիկոսի յիշատակարանը. կենսագրութեամբ, յաւելումներով ու ծանօթութիւններով, Սահակ Մարտիրոսի մրցանակին արժանացած. 1894	7 —
9 Գրեան Հայոց պատմ. գիրք Գ. Դուրեան Կաթող. 1780—1800 I (լուսանկար պատկերով և վիճակագրական կոնդակով) 1899.	4 —
10 Գրեան Հայոց պատմ. գիրք Ե. Գրեան Կաթող. 1800—1808 (մի վիճակագրական կոնդակով) 1902	4 —
11 Գրեան Հայոց պատմ. գիրք Զ. Գրեան Կաթող. մ. I. 1801—2 մի վիճակագրական կոնդակով. 1904	4 —
12 Գրեան Հայոց պատմ. գիրք Է. Գրեան Կաթող. մ. II. 1803—4. իսկապատկերով 1905	4 —
13 Կարգ աստուածաշնչաբանութեան Հայաստանեայց ս. եկեղեցւոյ 35 նկարով, Ե. ապ. 1904	— 50
14 Հնէագիտութիւն, հնախօս, ուղեւոր. սրակ Ա. 1900	— 30
15 Պատի օրացոյց 1902 ամի. ժամանակագր. ձև տարի.	— 50
16 Նամակագիրք. 1902.	— 50
17 Ծոցի օրացոյց 1902 ամի և յաւելում. — Առողջապահական խորհրդով (սպառուած.)	— 15
18 Զարար Ղարաբաղեանցի կտակը և Մշակի գաւառացիները (սպ.)	— 5

Թարգմանութիւններ.

19 Հաւատարմութիւնը ամեն արգելքների յաղթում է Գ. Հոֆմանի 1877	— 40
20 Խաւարից դէպի լոյս Գ. Հոֆմ. 1878. (սպառ.)	— 40
21 Գոն Գիշտ լամանչեցի, Մ. Սերվ. 1878 (սպառ.)	— 70
22 Գեորգ Ռօլլէստօն, 1879 (սպառուած)	— 60
23 Երբորդ սիւն, առակ. Լակիշէի Բ. ապ. 1893.	— 10
24 Ռօլլէստօնի (հրատ. Թիֆլ. սպառուած) (սպառ.)	— 60
25 Չեռտերստօնի ժամանակը, պատկերագր. 1882 (սպառ.)	1 —
26 Ակտէա. ա. Սիսոբոյի. 1885 (սպառուած)	— 50
27 Եան Էրնստ Մօլլար. Ն. Եանչուկի, 1885 (սպ.)	— 20
28 Երծուի մտածմունքը, սրոֆ. Մ. Բոգդան. 1892	— 5
29 Գիւղի սուրբը. Սվետոսլոյկ Չէիի, 1892	— 10
30 Կեանքի դպրոցը, Գիւղի, 1892	1 —
31 Գեպի Աթէնք, Հ. Սենկեվիչի Բ. ապ. 1901.	— 15
32 Մի կտոր հաց, Պոտոպոլսկի Բ. ապ. 1901	— 10
33 Որսորդ, Օ. Շրայնիերի	— 10
34 Մատուռի աւերակներում, Օ. Շրայնիերի	— 10
35 Կարա	— 5
36 Առատապետ Ֆրեդերիկ. Էրկման Շարիանի, 1903.	— 40
37 Տնային բնակարան, սրակ Ա. (գրքի ամբողջ կէտը) 1903	1 —
38 " " սրակ Բ. (գրքի ամբողջ կէտը) 1903	1 60

82
7-73

պ.

ԿՈՆԱՆ — ԳՈՅԼ



ԲՆՆԱԿՆ

ԻՆՉՊԻՍ ԱԶԱՏԵՑԻ

(Էստիլն ժերալի արկածներից)

1001
4973

Թարգմանեց Տ. Վ.



Թ Ի Ե Լ Ի Բ — 1904

Առատապետ Ա. Զուլթաթեղաձէի, Նիկ. 21
Скоропечатня А. Кутателадзе. Ник. 21

(Արտատպած Վառնայի երկամսեայ հանդիսից):

Մեծ յոյս ունէի, որ ասածներս կգրդէին նորան յարձակում դործելու, բայց, դժբաղտարար, այդ ժամանակ մեր բոլոր մարաջախտներն իրար գրուխ էին կրծում, իրար վրայ հաչելով և ատամներ ցոյց տալով էին զբաղուած, ինչպէն կատարեալ քաղցած շներ,— Նէյն ատում էր Մասսենային, սա ատում էր Ժիւնոյին, իսկ Սուն բոլորին. ուստի և ոչինչ էլ չէր ձեռնարկում: Այն ինչ պաշարն սկսուել էր պակսել, իսկ մեր պատուական այրուձին կորչում-անհետանում էր սպուռի պակասութիւնից: Ձմեռուայ վերջերքին մենք արդէն հնարաւորութիւն էինք ունեցել թալանել երկիրն ամբողջապէս, բայց և այնպէս սւտելու ոչ մի բան չէինք կարողացել ձեռք ձգել, չընայելով, որ մեր պաշարի թեթև գնդերն ամբողջ չըջակայքը աջ ու ձախ ոտքի տակ էին տուել: Նոյն իսկ մեզնից ամենահամարձակների համար պարզ էր, որ նահանջելու ժամը հասել է: Նո էլ խօսք չկայ, չէի կարող չխոստովանել այդ:

Բայց նահանջին էլ շատ հեշտ բան չէր: Այ միայն մեր զօրքերը թուլացել ու հիւծուել էին պաշարի պակասութիւնից, այլ և թշնամին խիստ սգևորուեցաւ, տեսնելով մեր անվերջ անդործութիւնը: Վեղինկոտնից, սլէտք է ասել, շատ էլ չէինք վախենում. ձիւղ է, նա քաջ ու չըջահայեաց էր, բայց ձեռներեցութեան հարկաւոր հոգին չուներ. իսկ միւս կողմից՝ ուզենար էլ, չէր կարող մեզ արագ հետևել՝ այդ մեր ձեռքով անսպաս դարձրած երկրի միջով: Բորա փոխարէն մեր երկու թևերի կողմից և հետևից չըջատուած էին պարտուզալացի զինուած զիւղացիների և գվերիլիանների՝ կամաւորների ահագին բազմութեամբ: Այդ ամբողջ անկանոն բաղմութիւնը ողջ ձմեռը բաւական յարգական հեռաւորութեան վրայ էր պահում իրեն, իսկ այժմ, երբ մեր ձեռները բոլորովին յոգնել ու դադրել էին, նոքա աներես ճանճերի պէս մեր յուռաչապահների «գահէն» էին տանում, և ով որ բնկնէր նոցա ձեռքը, վայն եկելուտարի էր նորան. արդէն գիտէինք, որ այդպիսին էլ փրկութիւն չուներ: Նա կարող եմ իմ անձնական — ծանօթ սպաներից ամբողջ տանեակ անուներ թուել, որոնք կոտորուել, սպանուել էին նոցա ձեռքով այդ կարճ միջոցում և ամենից բաղդաւորը նոցանից կարող էր նա համարուել, որն սպանուում էր հրացանի բռնուելով, որ դժբաղդ դո՛նի գլխին կամ սրտամիջին էր ուղղում, այս կամ այն ժայռի կամ քարի, ծերպի յետևից: Ամանք այնպիսի սարսափելի տանջանքներով էին մահ ընդո-

նում, որ մենք, հնար եղածի չափ, աշխատում էինք, այդ յուրերը նոցա ազգականների ականջը չհասնէին: Այդպիսի սղբերգական դէպքերն այնքան յաճախ էին կրկնուում և այնպիսի զօրեղ սպանորութիւն էին թողել մեր զինուորների վրայ, որ մեծ դժուարութեամբ էինք կարողանում հարկաւոր դէպքում բանակից դուրս ուղարկել նոցա: Գվերիլիանների մէջ, մանաւանդ, աչքի էր ընկնում մի վատչուէր, անզգամ արարած, նոցա պարագլուխը, որի անունն էր Մանուէլո «Թպտուն», որի արարքները սարսուռ էր ձգել մեր զինուորների վրայ: Դա մի վիթխարի, հաստամարմին մարդ էր, ուրախ դէմքով: Իւր խմբի՝ այդ աւազակների գլուխն անցած մեր ձախ թևի կողմը գտնուող լեռների մէջ էր ծածկուած-պահուած այդ անպիտանը: Ամբողջ հասողներ կարելի է զրել այդ քաջի անգութ դործերի մասին, բայց չի կարելի և չխոստովանել, որ նա աչքի ընկնող մէկն էր, և իւր հրոսակախումբն այնպէս էր կազմակերպել ու դասաւորել, որ անհնար էր նորա բռնած տեղերից միւս կողմն անցնել: Այդ բանը շատ վտանգաւոր հանգամանք էր դարձել, բայց ունեցաւ և իւր մի քանի, բոլորովին անսպասելի, հետևանքները, որի մէջ կհամոզուէք իմ պատմածի շարունակութիւնը լսելով: Եթէ նա հիպոտով ծեծել շտար իւր տեղապահին... բայց, չարժէ առաջ վազել, իւր ժամանակին այդ կլսէք:

Նահանջի հետ կապուած էր շատ մեծ դժուարութիւններ, բայց բոլորովին պարզ էր, որ ուրիշ հնարք չէր մնացել, ուստի և Մասսենան առանց դանդաղելու սկսեց հիւանդներին ու սայլերի կարուսանը Տօրրես-Նովասից, որտեղ գտնուում էր գլխաւոր բանակետը, ուղարկել Կօմբրի՝ մեր հազորակցութեան դժի վրայ եղած ամենամօտ ամբոցը: Սակայն այդ բանը նա չկարողացաւ ծածուկ կատարել, ուստի և գվերիլիանները հետզհետէ սկսեցին ամբողջ վտանակներով երևալ մեր թևերի կողմերում: Մեր զօրաբաժիններից մէկը, որի հրամանատարն էր Կլօզէլը, Մօնբրիօնի հեծելազօրի գումարտակի հետ, այդ ժամանակ գտնուում էր Տագօից շատ հարաւ և անհրաժեշտ էր անպատճառ իմաց տալ նոցա ևս մեր նահանջելու դիտաւորութեան մասին, ապա թէ ոչ նոքա բոլորովին որեէ օգնութիւնից զուրկ կմնային՝ թշնամու երկրի հէնց կենարտնում: Շտա լաւ եմ մտաբերում իմ մտորանքս, թէ ինչպէս պիտի վարուի Մասսենան, որովհետև սովորական լրատարներն անկարող էին ճեղքել անցնել թշնամու պահակները, իսկ փոքրիկ

խմբերն, անշուշտ, պարտութիւն պիտի կրէին: Ինչ եղանակով էլ լինէր, բայց նորա պէտք է անշուշտ նահանջի հրաման ստանային, ապա թէ ոչ Պրանսիան տասնհետոս հազար մարդ կարող էր կորցնել: Իմ մտքով չէր էլ անցնում, որ ինձ՝ զնգապետ ժերարիս էր վիճակուած այդ գործն անելու պատիւը, որը միայն հէնց կարող էր փառքով պսակել ում կամենաք և որ պէտք է ամենաառաջին տեղը բռնէր այն բոլոր քաջագործութիւններս մէջ, որոնց շնորհիւ ամենայայտնի մարդ էի դարձել:

Այդ ժամանակ ես ծառայում էի Մասսենայի սպայակոչտի մէջ, որտեղ բացի ինձնից գտնուում էին նոյնպէս երկու խիտ քաջ, խելօք ու ընդունակ աջակից սպայ (ԱԴԵՅՈՒՅԱԿՄԵ): Նոցանից մէկի անունն էր Կորտեքս, իսկ միւսինը՝ Գիւլլեասի: Նորա երկուսն էլ ինձնից մեծ էին տարիքով, բայց կրտսեր միւս յարաբերութիւնների նկատմամբ: Կորտեքսը մի փոքրիկ, թխադէմ մարդ էր, շատ աշխոյժ ու կրակոտ: Նա մի պատուական զինուորական էր, որ կորաւ միայն իւր ինքնավստահութեան երեսից:

Եթէ նորան ականջ կախելու լինէիք, ամբողջ բանակում առաջին մարդն ինքն էր: Գիւլլեասին, ինչպէս և ես, գասկոնացի էր և շատ էլ սիրուն աղամարդ, առհասարակ ինչպէս բոլոր գասկոնացիքս: Ամենքս օրապահութիւն էինք անում հերթով և հէնց այն առաւօտը, որի մասին պատմում եմ, հերթապահը Կորտեքսն էր: Ես տեսայ նորան միայն նախաճաշի ժամանակ, որից յետոյ նա ոտքով-գլխով անհետացաւ իւր ձիու հետ: Այդ ամբողջ օրը, Մասսենան, ինչպէս և առհասարակ շատ մըրուայ էր և համարեա ամբողջ օրը հեռադիտակով գիտում էր անզղիական բանակի ամբուժիւնները և այն նաւերը, որ երկուում էին Տագոյի վրայ: Այ մի խօսք չապաց նա թէ ինչ յանձնարարութեամբ էր ուղարկել մեր ընկերօջը: Իսկ մենք էլ չէինք համարձակուում բան հարցնել: Հէնց նոյն գիշերը, ժամը տասներկուսի մօտերը, ես կանգնած էի մարաջախտի կացարանի մօտ, երբ նա գուրտ եկաւ և մօտ կէս ժամ բոլորովին անշարժ, արձանացած ձեռները կրծքին խաչած կանգնեց, խոր հայեացքով գիտելով գիշերուայ խաւարը՝ դէպի արևելք: Նա մինչ այն աստիճան անշարժ էր, որ նորա վերաբերուի մէջ փաթաթուած և սրբածայր գլխարկով ամբողջ մարմինը կարկիլ էր արձանի տեղ ընդունել: Արչափ էլ բոլոր մտաւոր ոյժերս հաւաքեցի և խելքիս զօր տուի, բայց ոչինչ, ոչինչ հասկանալ չկարողացայ,

թէ ինչ էր գիտում մարաջախտն այդպէս յառած՝ հայեացքով վերջապէս սրտեղած՝ հայհոյանք արձակելով բերնից և կրունկների վրայ շուռ գալով տուն գնաց և դուռն ամուր շրխկացրեց յեակից:

Հետևեալ օրն, առաւօտեան, Մասսենայի և իւր օգնական սպայի մէջ մի խօսակցութիւն տեղի ունեցաւ, որից յետոյ Գիւլլեասին ևս անհետ կորաւ իւր ձիու հետ: Այդ գիշեր, երբ ես նստած էի նախասենեակում, մարաջախտը նորից անցաւ իմ մօտով և ես նկատեցի լուսամուտից, թէ ինչպէս երեկ գիշերուայ պէս կանգնած դէպի հեռու արևելք է նայում: Ամբողջ կէս ժամ կանգնած էր այդպէս անշարժ, կարծես խաւարի մէջ մեխուած ստուէր լինէր: Յետոյ կրկին տուն դարձաւ, դուռը շրխկացրեց և լսեցի նորա կոչիկները խթանների ձայնը և թրի չխչխոցը սրահով այնելու ժամանակ: Նոյն իսկ իւր հոգեկան ամենալաւ բողբոջներին բաւական դաժան ծերունու մէկն էր Մասսենան, իսկ երբ բարկանում էր, Աստուած հեռու տանէր. այդպիսի բողբոջներին անելի կգերազանէի երես առ երես նոյն իսկ իրեն՝ կայսրի առաջ կանգնած լինել, քան նորա: Գիշերը լսում էի, ինչպէս քթի տակին փնփնթում ու հայհոյում էր և ոտները գետին էր զարկում գլխավերևս, բայց ինձ չէր կանչում, իսկ ես շատ լաւ գիտէի նորա բնաւորութիւնը և առանց կանչելու չէի համարձակուում վերև գնալ:

Հետևեալ առաւօտեան իմ հերթս էր, որովհետև երեքից միայն ես էի մնացել տանը: Մասսենայի սիրելին էի համարուում: Նա, առհասարակ, մի առանձին համակրանք էր տածում դէպի քաջարի զինուորականները: Հաւատացնում եմ և պնդում, որ այդ առաւօտը, երբ ինձ իւր մօտ կանչեց, նորա թուխ աքքերում արցունքի կաթիլներ էին շողում:

—Ժերար, ասաց նա,—մօտ եկէք:
Բարեկամաբար թելիցս բռնելով՝ արևելք նայող լուսամուտի մօտ տարաւ:

Մեր առաջ տարածուած-փռուած էր հետեակ գօրքի բանակը. իսկ նոցանից յետոյ՝ հեռուում, հեծելազօրը իւր կապած ձիերի երկար շարքերով: Շատ պարզ նշմարել կարելի էր ֆրանսիական առաջապահ գօրքի պահակները, իսկ յետոյ ձգուում էր մի բաւական ընդարձակ, բաց դաշտավայր, տեղ-տեղ կանաչին տուող խաղողի այգիներով: Նոցանից յետոյ, աւելի հեռուում շարան-շարան ընկած էին բլուրների շարքեր, որոնց մէջ ամե-

նից աւելի աչքի էր ընկնում մէկը իւր սրածայր, բիզ գագաթով: Այդ բլրակները ստորտոնները գօտեորում էին անտառի շերտերով: Միակ լայն ձանապարհը շատ նկատելի կերպով աչքի էր զարնում շրջապատող կանաչների մէջ, իբրև մի սպիտակ լայն երկզ, որը երբեմն իջնում, երբեմն բարձրանում և կորչում էր, նորից երևում և վերջապէս բոլորովին անհետանում հեռու բլուրներից մէկի կրճում:

—Ա՛յ, տեսնում ես,—ասաց Մասսենան, ցոյց տալով սաբբը, դա՛ Սիերրա դը-Մերոզալն է: Նորա գագաթին բան տեսնում էք:

Պատասխանեցի որ՝ ոչինչ:

—Իսկ այժմ, հարցրեց նա ինձ տալով իւր հեռագրիտակը: Դիտակի օգնութեամբ լեռան սէռի վրայ մի փոքրիկ բարձրութիւն տեսայ, որ քարակոյտի կամ գերեզմանաքարի էր նմանում:

—Այն ինչ որ տեսնում էք,—շարունակեց մարաջախտը, —ուրիշ բան չէ, եթէ ոչ գերանների կոյտ, որ ցցուած են փարոսի նման: Մենք այդ գերանները ցցել ենք այն ժամանակ, երբ այս բոլոր շրջակայքը դեռ ևս մեր ձեռքին էր. իսկ այժմ, թէ և նա այլ ևս մեր ձեռքին չէ, բայց և այնպէս նշանը դեռ ևս այնտեղ է: Ժերար, այդ գերաններն այս գիշեր պիտի վառուին անպատճառ: Այդ բանին պէտք ունի Ֆրանսիան, կայսրը և զօրքը: Զեր ընկերակիցներից երկուսն արդէն ուղևորուել են նոյն յանձնարարութեամբ, բայց նոցանից և ոչ մէկին չի յաջողել մինչև գագաթը բարձրանար Այսօր ձեր հերթն է, և ես ազօթում եմ Աստուծուն, որ դուք աւելի բաղդաւոր լինիք և առաւել յաջողակ:

Զինուորը չպէտք է հարցնէ իրեն տուած հրամանի նպատակի մասին, ուստի շտապեցի ելնել սենեակից բայց մարաջախտը ձեռքն ուսիս դնելով մի փոքր պահեց ինձ:

—Այս բոլորիս ամեն ինչ կիմանաք և կհասկանաք, թէ որչափ կարևոր է այն գործը, որի համար դուք կեանքներդ վտանգի էք ենթարկում,—ասաց նա:

—Մեզնից յիսուն մղոն հեռու, Տագոյ գետի միւս ափին, գտնւում է Կլօզելի բանակը: Նորա բանակը գետեղուած է Սիերրա դ'Օսսա լեռնագագաթի հէնց ստորտուում: Այդ սրածայր գագաթի ծայրին գտնւում է մի փարոս, իսկ նորա մօտ մի զինուոր: Մեր մէջ պայմանա-

ւորուած ենք, թէ հէնց որ կէս գիշերին կնկատի մեր նշանի կրակը, նա իսկոյն պիտի վառէ իւր նշանի խարոյկը և անմիջապէս նահանջէ դէպի գլխաւոր բանակը: Եւ եթէ նա այդ բանն իսկոյն չանէ, ապա ես կնահանջեմ առանց նորան սպասելու: Նրկու օր, իրար ետեկից, ես աշխատեցի պայմանաւորուած նշանով իմաց տալ նորան: Այսօր պէտք է կամ հասնեմ նպատակիս և կամ նորա բոլոր բանակը մեր յետեւ կմնայ և կջարդուի:

Ա՛խ, բարեկամներս, չգիտէք թէ ինչպիսի հպարտութեամբ ցուեցաւ սիրտս, երբ, լսեցի, թէ ինչ մեծ գործ էր նախապատրաստել ինձ համար բաղդը: Եթէ կենդանի մնամ, այն ժամանակ իմ մրտենի պսակի վրայ կաւելանայ և մի նոր, փարթամ տերև ևս: Իսկ եթէ ընդհակառակը, մեռնեմ, ապա դա շատ արժանաւոր մահ կլինի: Ես ոչինչ չասացի բայց չեմ կասկածում, որ այդ ազնիւ խոհերս, բոլորն էլ արտափայլեցին դէմքիս վրայ, որովհետև Մասսենան յանկարծ, համարեա խելով, բռնեց ձեռքս և սկսեց ամուր, շատ ամուր թոթուել:

—Ահա բլուրը և նորա վրայի փարոսն,—ասաց նա: Ձեր և նորա մէջ եղած տարածութեան վրայ գտնւում է այն գլխաւոր լիւրիտար իւր խմբով: Այդ յանձնարարութիւնը ես մեծ խմբակի յանձնել չեմ կարող, իսկ փոքրիկ խմբակն էլ իսկոյն կնկատուի նոցա կողմից և կջարդուի: Ուստի և մենակ ձեզ եմ յանձնում այդ գործը: Կրուի բերէք, ինչպէս կամենաք, միայն այնպէս արէք, որ կէս գիշերին այն բլրի գլխին կրակ տեսնեմ:

—Եթէ ձեր ասածը չկատարուի, ապա կխնդրեմ ձեզնից, մարաջախտ Մասսենա, հոգալ, որ իմ ունեցած իրեղէններս ծախուի և փողերը մօրս ուղարկուի:

Ես ձեռքս գլխարկիս տարայ և կրունկներիս վրայ շուռեկայ հպարտութեամբ ճխացող սրտով, արբեցած այն մրաքով, թէ ինչ հերոսական գործ է սպասում ինձ:

Սուանձնացայ սենեակս և մի քանի ժամանակ սկսեցի մրտածել, թէ ինչպէս անեմ, որ յանձնարած գործս աւելի վարպետութեամբ սկսեմ: Այն փաստը, որ ոչ Կօրտեքսին, ոչ Դիւպլետտին չյաջողեց բարձրանալ Սիերրա դը-Մերոզալի գագաթը, չնայելով որ երկուսն էլ վերին աստիճանի ճարպիկ, եռանդուն և հմուտ սպաներ էին, ապացուցանում էր, որ ամբողջ դաշտավայրն իւր շրջակայքով աչալուրջ կերպով հսկւում էր գլխարկիտանների՝ կամաւորների կողմից: Քար-

տէզի վրայ տարածութիւնը չափեցի և հաշուեցի. մենք հետու էինք բլուրներէրց տասը մղոն, դաշտավայրի միջով: Յետոյ սկսուեմ էր բլրակի դոտրոտի անտառի շրջանը, որ տարածուեմ էր մօտ երեք կամ չորս մղոն: Այնուհետև գալիս էր իսկական դագաթը, որը թէև շատ բարձր չէր, սակայն ոչ մի հնար չկար թագնուելու նրա վրայ: Սոքա էին այն երեք շրջան ճանապարհորդութիւնը, որ դրուած էր առաջ և ես պիտի կատարէի: Ինձ այնպէս էր թուում, որ եթէ որևէ հնարքով հասնեմ մինչև անտառն, ապա մնացածն այնուհետև շատ հեշտ կլինէր, որովհետև կարող էի թագնուել ծառերի թառուաներում. գիշերային մթութեան ծածկոյթի տակ գագաթն էլեւել դժուար բան չէր: Իսկ յետոյ ժամը ութից մինչև տասներկուսը իմ տրամագրութեանս տակ մնում էր չորս ժամ մութ միջոց — որ շատ ու շատ բաւական էր բլուրըն էլեւելու համար: Եւ այսպէս ամենամեծ դժուարութիւնը ներկայացնում էր առաջին մասը: Հարթ, տափարակ դաշտավայրի միջով ձգուած-անցնում էր շատ բան խոտացող ճանապարհը և ես մտաբերեցի, որ իմ երկու ընկերներս էլ գնացել էին ձիով: Հէնց այդ հանդամանքն էլ անշուշտ, նոցա կորստեան պատճառն էր եղել, որովհետև աւազակների համար ճանապարհը շարունակ դիտելուց և իւրաքանչիւր անցորդի համար թակարդ լարելուց էլ հեշտ բան չկար: Ինձ համար, զիտէք, որ մեծ դժուարութիւն չէր սրբաշաւ անցնել այդ տարածութիւնը, որովհետև մօտս էին գտնուում ոչ միայն իմ Ալիօլէտտաս և Ռատասպանս, մեր բանակի երկու ամենաընտիր և առաջնակարգ նժոյզներս, այլ և պատուական անդլիական որսի ձիս, որ իսկ էլ սէր Աօտտօնից: Բայց և այնպէս, երկար չափ ու կշիւ անելուց յետոյ, վճռեցի ստքով ճանապարհ ընկնել, որովհետև այդ ինձ հնարաւորութիւն կտար ամեն մի անտակնիալ պատահականութիւնից աւելի լաւ օգտուելու: Ինչ վերաբերում է հագուստիս, ապա կասեմ ձեզ բարեկամներս, որ հուտարական համադրեստի վրայից ձգեցի մի երկար վերարկու, գլուխս էլ անցրի մի գորշագոյն գլխարկ Գուցէ, կհարցնէք, ինչ՞ու գիւղացու պէս չձայտուեցայ: Կպատասխանեմ, որ ոչ մի ազնիւ մարդ չի կամենայ լրտեսի մահ ընդունել: Սպանուել՝ ողջ մէկ էր. իսկ մահ ընդունել պատերազմական դատարանի օրէնքներով՝ բոլորովին այլ բան է: Ես կեանքիս վերջն այդպիսի մահուան վտանգի չէի կամենում ենթարկել:

Այս օրից բաւական անցել էր, որ դադանի ելայ մեր բանակից և անցայ մեր պահապանների շարքի միջով: Աերարկուի տակ ունէի հեռագրիտակս, գրպանի տարճանակս և սուրս. իսկ գրպանումս կար՝ արեթ, կայծահայն և կայծաքար: Երկու-երեք մղոն տարածութիւնն արագ անցայ՝ ծածկուելով և պահուտուելով խաղողի թփերի յետը. այդ յաջողութիւնն ինձ աշխոյժ էր ներշնչում և ինքս ինձ մտածում էի, թէ մի քիչ խելքը գլխին և շրջանայեաց մարդն անպատճառ գործը գլուխս կը տանէր: Ինչ ասել կուզէ, որ մի մեծ բան չէր Աօրտեքսին կամ Գիւպլեստին նկատելը, որոնք բաց ճանապարհով սրընթաց արշաւում էին. բայց ուրիշ բան է ստատանայ ժերարը, որը առաջ է գնում թփերի տակով: Կարող եմ համարձակ պնդել, որ հինգ մղոն անցայ՝ առանց որևէ արգելքի հանդիպելու: Այդտեղ պատահեց մի փոքրիկ տնակ, շրջապատուած խաղողի այգիներով, որի մօտ նկատեցի մի քանի սայլ ու մի քանի էլ մարդ, — դոքա առաջին պատահած մարդիկն էին: Իսկ որովհետև ես արդէն մեր բանակի ամբողջութիւնների գծից դուրս էի գտնուում, ուստի և շատ լաւ դիտէի, որ այդ կողմերում պատահած ամեն մի մարդ իմ թշնամիներին էր սկստկանում: Ուստի և աւելի կուտայ, կուզ եկայ ու գետնին կայայ և այդպէս կուզէ-կուզ սկսեցի առաջ գնալ դէպի այն կէտը, որտեղից կարող էի աւելի լաւ դիտել, թէ ինչ էր կատարուած առաջս: Տեսայ, որ դատարկ գինու տակառները սայլերի վրայ դարսող գիւղացիներ են: Ինքս ինձ վճռեցի, որ նոքա ինձ ոչ օգնել կարող են և ոչ էլ խանգարել, ուստի և ճանապարհս շարունակեցի: Բայց շուտով համոզուեցայ, որ առաջս դրած խնդիրն այնքան էլ հեշտութեամբ լուծելու խնդիրներից չէր: Ինչպէս որ թուում էր առաջին հայեացքից: Որքան դաշտավայրը դէպի վեր էր բարձրանում, այնքան էլ թփերն աւելի ու աւելի նոսրանում էին և ես վերջապէս հասայ մի բոլորովին բաց տեղի, որ շրջապատուած էր ցածրիկ բլուրներով: Թագնուելով առուի մէջ, սկսեցի դիտակովս դիտել շուրջս և իսկոյն նկատեցի, որ ամեն մի բլրակի վրայ մի-մի պահնորդ էր կանգնած և որ այդ մարդիկն էլ, մեզ պէս, պահնորդների և զինուորների մի ամբողջ շարք էին կանգնեցրել այդ կողմերը. Ես լսել էի այն կարգապահութեան մասին, որ տիրում էր այն անզգամ «Սպտուեն» խմբի մէջ և այժմ հէնց աչքիս առաջ տեսնում էի շոշափելի օրինակը: Բլրակների մէջ ձգուած էր պահնորդների մի երկար —

անվերջ շղթայ, և եթէ բաւական մեծ պտոյտ էի արել, որ նոցա կողքանց, ըովընտի պատահեմ, բայց և այնպէս ճիշտ դէմ ու դէմ ելայ թշնամիներս դէմ: Մնացի մոլորուած, չգիտէի ինչ անեմ: Տեղն այնքան բաց-բացահար էր, որ եթէ մուկ էլ վազէր կնկատուէր: Եթէ գիշեր լինէր, աննկատելի կերպով կանցնէի, ինչպէս որ Անգղիացիք արին Տօրբէս-Վեդրասի մօտ, Բայց մինչև սառը հասնելը դեռ շատ ճանապարհ կար և եթէ սպասէի մինչև մութը կոխելը, ապա ես երբէք չէի կարող ժամանակին հասնել, որպէս զի փարոսը հրդեհէի ճիշդ կէս գիշերին: Եւ այսպէս, առուիս մէջ պտակած հազար ու մի ծրագիր էի կազմում, մէկը միւսին անուշաւեղի ու անելի վտանգաւոր, աւելի անիրագործելի: Եւ յանկարծ մի լուսաւոր միտք անցաւ գլուխովս, այն մտքերից մէկը, որ օգնութեան է հասնում չվհատող քաջին: Յիշում էք, ասացի, որ անակ-պանդոկի մօտ կանգնած էր երկու սայլ՝ բեռնաւորուած դատարկ տակառներով: Եղների գլուխը գարձրած էր արևելք, ուստի և պարզ էր, որ սայլերն այն կողմը պիտի երթային, որը հէնց ինձ էր պէտք: Եթէ միայն հնար գտնէի նոցա մէջ թագնուելու, ապա դա ամենայայտուց և հեշտ միջոցը կլինէր պահանջները շղթայի միջից անցնելու համար: Այդ ծրագիրն այնքան պարզ և միևնոյն ժամանակ էլ այնքան լաւ էր, որ այդ բանը մտածելուց յետոյ չկարողացայ ուրախութեանս արտայայտութեան բացականշու-թիւնս զսպել և իսկոյն շտապեցի դէպի անակ-պանդոկը: Այդտեղ թփերի յետևը թագնուած՝ սկսեցի դիտել ճանապարհի վրայ կառարուող ամեն մի բան:

Գլխներին կարմիր գլխարկ քաշած երեք զիւզացիներն արդէն սայլերից մէկը բեռնել և միւսի էլ մի երրորդ մասն արդէն լցրել էին: Տան մօտ դեռ բաւականաչափ դատարկ տակառներ էին թափթփուած, որոնք հանգիստ պառկած իրենց հերթին էին սպասում, թէ երբ պիտի սայլերի վրայ պառկեն: Բողոք հովանաւորում էր ինձ (ես միշտ էլ ասել եմ, որ բողոք կին է, ուստի և չի կարող պիմադրել զգլխիչ) երիտասարդ հուսարի առաջ): Այն ժամանակ, երբ ես դիտում էի, երեքն էլ մտան պանդոկը և որովհետև օրն էլ շատ տաք էր, յոգնել էին և ինչպէս երևում էր ծարաւը նեղում էր նոցա: Հէնց այդ րոպէին կայծակի արագութեամբ դուրս թռայ իմ թագստի տեղից, ցատկեցի սայլի մէջ և դատարկ տակառներից մէկի մէջ սլուեցի: Տակառը տակ ունէր, բայց բերնակալ չու-

նէր և պառկեցրած էր կողքի վերայ, բացառածքը դէպի սայլ ներսը: Ես կունդ ու կծիկ դարձայ, կուշ եկայ շան պէս, որը կուշ է զալիս իւր նեղ բնի մէջ, ծնկներս ծախեցի և համարեա կպցրի կզակիս, որովհետև տակառը շատ մեծերից չէր, իսկ ես բաւական խոշոր մարդ էի: Մինչդեռ ես այդպէս պառկած էի, երեք զիւզացիները նորից դուրս ելան և իսկոյն գլխավերս մի թրխկոց լսեցի, որից և եզրակացրի, որ վրաս մի ուրիշ տակառ էլ գրին: Նորա այդ տակառներից այնքան լցրին սայլի մէջ, որ մոլորուել-մնացել էի, թէ ինչպէս պիտի դուրս պրծնեմ այդտեղից: Սակայն սով է մինչև գետը հասնելը բորկանում: Հաստատ համոզուած էի, որ եթէ բողոք և իմ սեփական խելքս օգնեցին մինչև այդտեղ հասնելու, ապա անշուշտ այդ օգնութիւնը յետոյ էլ չեն զլանայ:

Երբ սայլակը պակէ-պուռկ լցուեցաւ, նորա ճանապարհ ընկան, իսկ ես սոսա ու փուս քթիս տակը ծիծաղում էի իմ տակառի միջից, որովհետև ամեն մի նոր քայլն ինձ իմ նպատակ-կէտին էր մօտեցնում: Առաջ էին գնում շատ դանդաղ, իսկ զիւզացիները քայլում էին սայլերի մօտով: Այդ բանը ես եզրակացրի նորանից, որ իմ շուրջս՝ շատ մօտ խօսակցութեան ձայներ էին լսուում: Գիւզացիները շատ ուրախ մարդիկ էին երևում, որովհետև ամբողջ ժամանակը ծիծաղում էին՝ հոգու խորքից և շարունակ առաջ գնում: Ի՞նչ էր նոցա ծիծաղի ու համաքնների պատճառը՝ չիմացայ. թէ և բաւական ազատ խօսում եմ նոցա լեզուով, բայց ծիծաղելու ոչ մի բան չէի գտնում ականջիս հասնող կցկտուր խօսքերից:

Ես ենթադրում էի, թէ այն պրագութեամբ, որով եղներն էին առաջ գնում, մենք ժամը մօտ երկու մղոն էինք կտրում: Ուստի, երբ համոզուեցի որ արդէն երկու ժամ ու կէս անցել էր (անտանելի ժամեր էին դռբա, բարեկամներս, որ անցրի բոլորովին գունդ ու կծիկ դարձած, խեղդուելիս և համարեա թէ թունաւորուած զինու գոլորչիներից), ապա այլ ևս չէի կասկածում, որ ամենավտանգաւոր տեղը մենք յետներս էինք թողել և որ այժմ անտառի ու լեռան սահմանագծի վրայ ենք գտնուում: Այժմ մնում էր, որ խելքիս զօր տայի, թէ ինչպէս դուրս պրծնեմ տակառների արանքից: Հազար ու մի միջոցներ էին անցնում մտքովս և ես մնացել էի շուարած. թէ դոցանից որն աւելի յարմարագոյն է, երբ խնդիրը ինքն իրեն լուծուեցաւ ամենապարզ եղանակով և ինձ համար բոլորովին անսպասելի հետևանքով:

Յանկարծական մի ցնցում զգացի. սայլը իսկոյն կանգ-
նեց և մի քանի կոշա ու բիրդ ձայներ, յուզուած շէշտերով
սկսեցին միանգամայն խօսել:

— Որտե՞ղ է, որտե՞ղ, — բացականչեց մէկը:

— Մեր սայլի մէջ, պատասխանեց միւսը:

— Ո՞վ է, ինչ մարդ է հարցրեց երրորդը:

— Ֆրանսիացի ոսպայ. ես տեսայ նորա գլխարկն ու կո-
շիկները:

Ամենքն էլ բարձրաձայն ծիծաղում էին:

— Պանգոկի լուսամուտից նայում էի և տեսայ, ինչպէս
ցատկեց — սլուեց տակաւուրի մէջ. կարծես ցլամարտ լինէր, որին
Սեվիլիայի կրկէսի ցուլն էր հալածում:

Ուրեմն, որ տակաւն է:

— Ահա այս, պատասխանեց մարդն ու բռունցքով զար-
կեց հենց գլխիս մօտ եղած տակաւին:

Այ ձեզ դուրթիւն, բարեկամներս, այն էլ իմ անուան
ու վարկի տէր մարդու համար: Իհու այսօր էլ, քառասուն տա-
րի անցնելուց յետոյ, կարմրում եմ այդ դէպքը յիշելու ժամա-
նակ: Հաւի պէս կապուած, կապկպուած լինել և անխօս լսել
այդ արջերի քամահանքը, դորա հետ գիտակցել, թէ ինչպիսի
անարժան և ծիծաղելի վախճան ունեցաւ իմ առաքելութիւնս...
Ես անկեղծ շնորհակարտ կ'լինէի այն մարդուն, որի մտքովն
այդ րուպէին կանչուէր զնդակն ուղղել ճակատիս և այդպիսով
կազատել ինձ իմ յուսահատ վիճակիցս:

Լսում էի տակաւնների թխկոցը, որ սայլակից վայր էին
ձգում և յանկարծ առանց ցցում տեսայ երկու, ահագին մի-
րուքով մարդ, հետն էլ երկու հրացանի փող՝ ինձ ուղղուած:

Նորա կոպտութեամբ բռնեցին ինձ իմ համազգեստի թե-
ւերից և լոյս աշխարհ հանեցին: Սրբի մի շատ ողորմելի պատ-
կեր էի ներկայացնում ես այդ րուպէին, երբ կանգնած աչքերս
կկոցում էի արևի աչք կորացնելու չափ վայրուս լոյսից և
հազիւ հազ կարողանում էի շունչ քաշել: Բոլորովին կծկուել
մնացել էի և չէի կարողանում ընդարմացած անդամներս ուղ-
ղել, իսկ իմ համազգեստի անդդիական զինուորի համազգեստի
պէս կէս-կարմիր գոյն էր ստացել, գինու գերդից, որի վրայ
եւ առօք-փառօք պարկել էի: Այդ շնորք չէին զազարում ծի-
ծաղելուց և իմ բոլոր ջանքերս, որով ձեռքի շարժումներով և
կեցուածքովս փորձում էի կատարեալ արհամարհանք արտա-
յայտել դէպի նոցա, ծիծաղի աւելի անզուսպ քրքիջ էին խլում
նոցանից: Բայց և այնպէս ինքս ինձ պահում էի սովորական
արժանապատուութեան զգացմամբ և արդէն կարողացայ նկա-
տել, որ այդ ծիծաղող դէմքերից ամենքը չէին, որ յօժարու-
թեամբ և ևս արժանօք կկամենային հանդիպել հայեացքիս:

Ինձ համար արդէն բաւական էր լսել մի հայեացք, որ
ըմբռնէի իրերի իսկական դրուժիւնը: Գիւղացիները մատնել

էին ինձ գվերիլեաների առաջապահ պահնորդներից մէկին:
Նուրբ հաւաքուել էին այդ շներից ութ հօգի, վայրենի արտա-
քինով, լայնեզր գլխարկի տակ փռուած երկար մագերը չթէ
թաշկինակով կապած և բազմաթիւ կոճակներով զարդարուած
բաճկոններով և զոյնզոյն դօտիներով: Եւրաքանչիւրն ունէր
մի մի հրացան և մի թէ երկու ասքճանակ՝ գօտիներն անցրած:
Նոցա առաջնորդը, մի ահագին միւրուքով սրիկայ իւր հրացա-
նի փողը դէմ արեց ախանջիս, իսկ այդ ժամանակ մնացածնե-
րը խուզարկում էին ինձ՝ տակն ու վրայ անելով զրպաններս.
Ի վերջոյ խեցին թիկնոցս, առան առճանակս, հեռադիտա-
կը, սուրս և որ ամենից կարևորն էր՝ արեթր, կայծաքարն ու
կայծահանը: Այժմ ես ինձ բոլորովին կորած մարդ էի համա-
րում, որովհետև ինչ էլ որ չպատահէր, բայց ես այժմ այնպիսի
անկարելի պայմանների մէջ էի, որ չէի կարող կրակ տալ փա-
րօքը, եթէ նոյն իսկ յաջողէի հասնել նորան:

Նորա ութ հօգի էին, բարեկամներս, աւելացրէք դորա
վրայ և երեք զիւղացի և այդ ամենը միայն իմ դէմ, այն էլ բո-
լորովին զինաթափ եղած: Արդեօք էսի՞նք ծերարն այդ բանից
յուսահատուեց: Ինքն իրեն կորցրեց: Ս, դուք ինձ շատ լաւ
էք ճանաչում, բայց այդ շուն-առազակները դեռ ես չէիմ ճա-
նաչում ինձ: Երբէք կհանքիս մէջ դեռ ես այդպիսի զարմանալի
ճարպիկութիւն և կամքի վերջին այժ չէի գործ գրել, ինչպէս այդ
րուպէին, երբ ամեն ինչ կորած էի համարում: Բայց դեռ երկար
գլուխ կկտորէք, մինչև որ կկարողանաք կուսել, թէ ինչպէս
յաջողեցի նոցա ձեռքից պրծնել: Լսեցէք, ես կպատմեմ:

Սայլից դուրս քաշելուց յետոյ, նորա խուզարկեցին ինձ,
իսկ ես մնացել էի սառած կանգնած, երկար ժամանակ կուշ
եկած պառկելուց բոլորովին փայտացած անդամներով: Բայց
չուտով այդ ընդարմութիւնն սկսեց անցնել կամաց-կամաց և
միաքս սկսեց եռանդով գործել՝ փախուստի նորանոր հնարներ
գտնելով: Առազակների յառաջապահ խուճըրը գտնուում էր լեռ-
նային մի նեղ կրճում: Նորա մի կողմով ձգուած էր զառիվեր
թեք սար, իսկ միւս կողմից՝ մի զառիվայր թեք մակերևութ,
որ հասնում էր մինչև յառաջապահ խմբից մի քանի հարիւր օտը
հեռու դանուող մայրաններով ծածկուած ձորակը: Այդ քաջերը,
ինչպէս ինքներդ կարող էք հասկանալ, կոշտ լեռնցիներ էին
և ինձնից աւելի արագ ու ճարպիկ կարող էին մագրցել լեռների
վրայով: Նորա հագել էին պինդ տրիստաներով օտքերին կա-
պած տրիսներ, որ լեռնային աշխարհում ամենահիմնալի յե-
նակէտ, կուռանն է: Իմ տեղս եթէ մի ուրիշ, աւելի թոյլ ու
պակաս եռանդի տէր մարդ լինէր, այդ բոլոր տեսներուց յե-
տոյ, անշուշտ, յուսահատութեան զիրկը կընկնէր, բայց ես մի
ակնթարթում կշուեցի այդ բոլոր հանգամանքները և օգտուե-
ցայ այն օտարտաի զիպուածով, որ բարդը գրել էր իմ ճանա-
պարհի վրայ: Զառիթեք կողի հէց մայրին ընկած էր դատարկ

տակառններից մէկը: Ես ամենայն զգուշութեամբ, կամաց կամաց մօտեցայ նորան, մի ոստիւնով, որ պատիւ կը բերէր ամենաճարպիկ վագրին անգամ, թուայ տակառնի մէջ՝ ոտքերս դէպի առաջ և, թափահարելով նորան՝ ամբողջ մարմնովս, գործեցի բլրակի եզրից ներքև:

Արգեօք կմոռանամ երբեքիցէ այդ գարհուրելի ճանապարհորդութիւնը, երբ ես գոռում գոչումով, ահագին աղմուկով սարսափելի զանովայրից ներքև էի գլորւում: Ծնկներս ու արմունկներս դէմ էի տուել տակառնի պատերին, որպէս զի ինքս ինձնից աւելի միապաղաղ զանգուած կազմէի. բայց գլուխս, այնուամենայնիւ, մնացել էր դուրս պրծած տակառնի բերնի բացուածքից և ես շատ մեծ հրաշք եմ համարում, որ ջարդուփչուր չարի գլուխս: Սկիզբը գլորւում էի հարթ, հաւասար թեք մակերևոյթի վրայով. յետոյ սկսեցին պատահել խիստ դուրս ցցուած կողեր, որոնց վրայով տակառն այլ ևս ոչ թէ գլորւում էր, այլ ցատկոտում վայրի այծի պէս և առաջ նետւում աղմուկ ու ցնցումներով, որից մարմնիս ամեն մի ոսկրոտին ցաւում ու տանջում էր: Քամին սուրում էր ականջներիս մէջ, իսկ գլուխս՝ պտտում ու պտտում էր, մինչև որ ես բոլորովին ինձ վատ զգացի և համարեա ուշագնաց եղայ: Յետոյ մէկ էլ զգացի մի սարսափելի թրխկոց և ոտների շխշխկոց. ես հասել էի այն մացառուտներին, որ ես վերևից նկատել էի ներքև, շատ ներքև խոր ձորակի մէջ: Դոցա միջից էլ ներքև գլորուելով, մի նոր թեք մակերևոյթի վրայով, տակառն ընկաւ նոր թփուտների մէջ, զարկուեցաւ մի ծառի և կտոր-կտոր զարձաւ: Ես դուրս եկայ շուրջս թափուած մի ամբողջ կոյտ տախտակի տաշեղների ու շրջանակների միջից, բոլորովին ջայռ ու փչուր մարմնով, բայց ուրախ և աւուրդ սրտով, որով զգում էի թէ ինչպիսի նշանաւոր գործ եմ արել և ես նորից արդէն երևակայում էի ինձ բլրակի վրայ կրակ տուած փարոսն աչքիս առաջ:

Նոր փորձած սարսափելի վեր ու վար ցատկոտելուց անտանելի սիրտ-խառնոց էի գլուծ և նոյն վիճակն էի զգում, ինչ որ առաջին անգամ ուկրաինոսում կասարած ծովային ճանապարհորդութեան ժամանակ, որից այնպէս գեղեցիկ օգտուել գիտեն նևնդ անգլիացիք: Ստիպուած էի մի քանի րոպէ հանդիստ նստել, գլուխս յեց ձեռքերիս, իմ խեղճ տակառնի մնացորդների մօտ: Բայց երկար ժամանակ հանգստանալու հնարաւորութիւն չկար: Արդէն ականջիս էր հասնում վերևից լրսուող աղմուկն ու աղաղակը, որից եզրակացրի, որ հետապնդողներս լեռնից վար են իջնում: Արագ ինքս ինձ ձգեցի թփուտի ամենախիտ բաժինը և վազեցի մինչ այն ժամանակ, երբ բոլորովին ուժասպառ եղայ: Այդ ժամանակ գետին փռուեցի, հազիւ-հազ կարողանալով շունչ քաշել, մինչ այն աստիճան հեռում էի և ականջներս սրած՝ սկսեցի ականջ գնել: Ոչ մի ձայն ծպտուն չէր հասնում ինձ. ակներև էր, որ կարողացել էի ազատուել ինձ հալածողների ճանկից:

ԵԿԻ

Նրբ բոլորովին ուշքի եկայ, իսկոյնսեթ նորից ճանապարհ ընկայ: Եւ ճախ քայլերս դէպի կողմնակի կածաններն էի ուղղում և պատահած գետակներն էի անցնում, որովհետև վախենում էի, որ յետևից չներին կարձակէին: Դուրս գալով մի բաց տեղ և չորս կողմս զիտելով ես, ի հաճոյս իմ, նկատեցի և համոզուեցայ, որ չնայելով իմ բոլոր արկածներիս՝ նպատակիցս շատ չէի շեղուել: Գլխավերևս երևում էր Մերօդայ սարը, որի սրածայր և լերկ գլուխը լեռան փեշերը և ստորոտը ծածկող կաղնուտի գաճաճ անտառի միջից դուրս էր ցցւում դէպի վերև: Այդ անտառը շարունակութիւն էր կազմում այն թփուտի, որի հովանու տակ պաշտպանութիւն էի գտել ես այդ րոպէին և, կարծում էի, որ երկիւղ կրելու ոչ մի տեղիք չունէի, քանի չէի հասել հանդիպակաց լանջի վրայ եղած անտառակին: Միևնոյն ժամանակ շատ էլ լաւ զգում էի, որ շրջապատուած եմ ամեն կողմից թշնամիներով, այն էլ բոլորովին անզէն: Նոցանից ոչ մէկին չէի տեսնում, բայց լսում էի յաճախակի սուլոցներ և մի անգամ, մինչև իսկ, հրացանի ձայն ինձնից ոչ շատ հեռու:

Մացառուտների միջից առաջ գնալը անտանելի դժուարութիւն էր, ուստի սաստիկ ուրախացայ, երբ անտառ մտնելով մի նեղ կածան նշմարեցի ծառերի միջով: Շատ հասկանալի է, որ այդ կածանով չգնացի, այլ նորա մօտերով և նորա ուղղութեամբ: Բաւական տեղ առաջ էի գնացել և, իմ ենթադրութեամբ, մօտենում էի անառի վերջին, երբ մի օտարոտի, երկար նուոցի ձայն հասաւ ականջիս: Սկիզբն այդ ձայնը որևէ կենդանու ձայնի տեղ դրի, իսկ քիչ յետոյ լսեցի Ֆրանսերէն լեզուով արտասանած բառեր և բացականչութիւն՝ «Ա՛խ, Աստուած իմ»: Զգուշութեամբ քայլերս ուղղեցի այն կողմը, որ տեղից այդ նուոցի ձայնն էր գալիս և ահա՛ թէ ինչ տեսայ:

Զոր տերևների՝ խաղալի կոյտի վրայ պառկած էր ամբողջ հասակով մի մարդ. հագին նոյնպիսի գորշագոյն զգեստ, ինչպէս իմս էր: Նա վտանգաւոր կերպով վերաւորուած էր թոււմ, որ ակնյայտնի էր կրծքին սեղմած արիւնտտ թաշկինակից: Նորա շուրջն արդէն արեան մեծ լճակ էր գոյացել, իսկ վրան ճանճերի մի ահագին բազմութիւն էր կիտուել, որոնց բզզոցն ու աղմուկն իսկ կը գրաւէին ուշադրութիւնս, եթէ նոյն իսկ վերաւորի հեծածանքը չլինէր: Մի րոպէհաստի տանձմուռի մէջ ընկայ, կասկածելով որևէ գարանից, ապա



յետոյ իսկոյն ցաւակցութեան և ազնիւ սրտի զգացումներն ինձ նուաճեցին և ես արագ առաջ վազեցի և ծնկաչոք ընկայ նորա մօտ: Պառկածը իւր մեռելագոյն — սարտնած դէմքն ինձ դարձրեց և ես ճանաչեցի... Իրևսլէսսիին, այն սպային որ ինձնից առաջ նոյն յանձնարարութեամբ էր ուղարկուած: Բաւական էր մի թեթև հայեացք իսկ ձգել նորա ներս ընկած այտերի և սառած աչքերի վրայ, որ հասկանայի, թէ՛ նա մեռնում է:

— Ժերար, — հազիւ արտասանեց նա, Ժերար...

Նս կարող էի միայն զգացուած դիտել նորան, բայց նա, ինչպէս ճշմարիտ և իսկական ազնուական, մինչև իսկ մեռնելու վերջին վայրկեանին, չմոռացաւ իւր պարտքը:

— Փարոսը, Ժերար, Չէ որ անպատճառ կրակ կը տաք...

— Աբէթ ու կայծահան ունիք:

— Ահա, այնտեղ են:

— Ապա ուրեմն այս գիշեր անպատճառ կրակ կտամ:

— Ձեր խօսքերն ինձ հնարաւորութիւն են տալիս հանգիստ մեռնելու: Նոքա հրացանով զարկեցին ինձ, Ժերար: Բայց, կասէք, չէ մարաջախտին, որ ձեռքիցս եկածն արի ես, ինչ որ հնարաւոր էր:

— Իսկ Կորտէ՞քսը:

— Բաղդը նորան աւելի քիչ ժպտաց քան ինձ: Նոցա ձեռքն ընկաւ և սարսափելի մահ ընդունեց: Նիթէ, Ժերար, կհամոզուիք, որ նոցա ձեռքիցն ազատուելու հնար չկայ, գրեմ դակն ուղղեցէք ձեր սրտին: Չէի կամենայ Կորտէքսի մահով մեռնէիք:

Տեսնում էի, որ հազիւ է կարողանում խօսել, ուստի և ստիպուած էի բոլորովին կռանալ դէպի նա, որպէս զի լսեմ ասածները:

— Չէիք կարող որևէ բան հաղորդել, այնպիսի մի բան, որ կարող լինէր նպատակա իրագործելու օգնել, հարցրի ես:

— Այո, այո, դը-Պամբալը... նա կօգնէ ձեզ: Վստահացէք դը-Պամբալի վրայ... այս ասելն ու գլուխը յետ թեքելն ու մեռնելը մէկ եղաւ:

— Վստահացէք դը-Պամբալի վրայ: Լաւ խորհուրդ է:

Ի մեծ զարմանս իմ, ես տեսայ մէկին, որ կանգնած էր հէնց կողքիս. մինչ այն աստիճան տարուած էի ընկերոջս հետ ունեցած խօսակցութեամբ և նորա վերջին խորհրդով, որ չնկատեցի էլ, թէ ինչպէս նա կամացուկ եկել մօտս կանգնել

էր: Նորան տեսնելու ու տեղից վեր թռչելու և դիմացը կանգնելու մէկ եղաւ: Դա մի բարձրահասակ, թխադէմ, սև մազերով, նոյնպիսի միրուքով և սևաչեայ մէկն էր, երկարաուուն թախծալից գէմքով: Ձեռքին բռնած էր մի շիշ պինի, իսկ ուսընդանուր ձգած էր իւր մուշկետոնը, ¹⁾ — մի գէնք որ գործ էին ածում այդ մարդիկը: Նորա մտքովն իսկ չանցաւ հանել իւր հրացանը, որից եզրակացրի, թէ սա պիտի լինի այն մարդը, որին յանձնարարում էր ինձ իմ մեռած ընկերս:

— Աւաղ, նա արդէն մեռել է, ասաց նա թեքուելով դէպի Իրևսլէսսին: — Նրբ նորան զարկեցին հրացանով, նա պահուեցաւ անտառի մէջ, բայց ինձ յաջողեցաւ գտնել նորան և կեանքի վերջին րոպէները մի փոքր թեթևացնել: Նս եմ շինել նորա համար այս անկողինը և ահա մի շիշ գինի էլ եմ ճարել, որ կարողանայի նորա ծարաւը յապեցնել:

— Պարոն, ասացի ես, — ընդունեցէք իմ շնորհակալութիւնս յանուն Ֆրանսիայի: Նս միմիայն թեթև հեծելազօրի գնդապետ եմ, իսկ անունս Ետիէն Ժերար է, և այդ անունը, անուշտ, մի գին ունի ֆրանսիական զօրքերի շարքում: Կարճ եմ հարցնել...

— Այո, սլարոն, ես՝ Ալօիզուս դը-Պամբալն եմ: Նոյն անունը կրող նշանաւոր ազնուականի կրտսեր եղբայրը: Այս քոպէիս ես վարում եմ գլխերիլասների խմբի առաջնորդի աւագ տեղապահի պաշտօնը, այն առաջնորդի, որ յայտնի է Մանուէլօ «Ժպտուն» մականունով:

Ազնիւ խօսք եմ ասում ձեզ, որ ձեռքս տարայ այն տեսողը, որտեղ ատրճանակս պիտի լինէր, բայց դը-Պամբալը միայն ժպտաց այդ շարժումս տեսնելով:

— Նս նորա աւագ տեղապահն եմ, բայց միևնոյն ժամանակ և նորա արիւնարբու թշնամին եմ, ասաց նա: Այս ասելու ժամանակ նա մի կողմ ձգեց թիկնոցը և շապիկը մի քիչ հանեց: — Տեսէք, բացականչեց նա դէպի իմ կողմս դարձնելով կարմիր կապոյտ բծերով նախած և արիւնլուիկ եղած մէջքը: — Ահա թէ ինչ օյին է խաղացել գլխիս «Ժպտունը», ինձ հետ, որի երակներում հոսում է պօրտուզալական ամենազնիւ արիւն: Թէ ինչով դուրս փոխարէնը կհատուցանեմ ես այդ «Ժպտունին», դուք դեռ ևս կտեսնէք:

¹⁾ Մուշկետոն — հին, նախնական հրացան:

Նորա աչքերի և կրճատացող սպիտակ ատամների մէջ այն-
պիսի խորին ատելութիւն էր արտայայտուում, որ այլ ևս չէի
կարող կասկածել նորա ասածների ճշմարտութեան մասին,
որի ապացոյցն էր աչքիս առաջ եղած ջարդուած և արիւն-
լուծիկ մէջքը:

— Իմ կողմս տասը հոգի կան, որոնք խոստանում են
պաշտպանել ինձ, ասաց նա:— Մի քանի օրից յետոյ, հէնց որ
կվերջացնեմ այստեղի գործերս, ես յոյս ունիմ գալ և միանալ
ձեր գործին, իսկ մինչև այդ ժամանակ...

Նորա դէմքի վերայ մի ակնթարթում յանկարծական փո-
փոխութիւն առաջացաւ, ձեռքն իսկոյն հրացանին տարաւ:

— Ձեռքերդ դէպի վեր, դու, շուն ֆրանսիացի,— գոռաց
նա:— Ձեռքերդ վեր, թէ չէ այս բոլորիս շան-սատակ կանեմ,
գլուխդ կջարդեմ:

Ինք, ի հարկէ, զարմանում էք, բարեկամներս, դուք
ապշուում էք: Ապա երևակայեցէք, թէ ես որքան զարմացած ու
չփոթուած և բոլորովին քարացած էի մնացել այդ անսպասելի
փոփոխութիւնից: Նս տեսայ իմ առաջս հրացանի սև փողը՝
ուղղած ինձ, իսկ նորա յետիւր մի գոյգ սև, կատաղի աչքեր:
Ինչ պիտի անէի: Բոլորովին անօգնական էի: Ձեռքներս վեր
բարձրացրի: Նոյն բոլորիս շորս կողմից լուսեցան ձայներ, ա-
ղաղակներ և վազողների ոտնաձայներ: Ծառերի կանաչ ձիւղե-
րի միջից երևաց մի ահազին խումբ զարհուրելի դէմքերով: մի
տասներկու ձեռք միաժամանակ յափշտակեցին ինձ և ես զըժ-
բաղտս, բոլորովին անօգնական, կրկին անգամ նոցա գերին
դարձայ: Բարեբաղտաբար, ատրճանակս մօտս չէր, որով կա-
րող էի ջարդ ու փշուր անել զանդս: Եթէ այն ժամանակ մօտս
ղէնք լինէր, ես այժմ այս սրճատանը նստած չէի լինիլ և չէի
պատմիլ ձեզ այս անցած-գնացած օրերի անցքերը:

Կեղտոտ, ճղուտ ձեռքերը ամուր բռնեցին ինձ երկու
կողմից և լեռնային տնտառի կածանով քաշ տուին, այն ինչ
անզգամ դը-Պամբալը նոցա հարկաւոր տեղեկութիւններ էր
հազորդում... Աւազակներից չորսը տանում էին Վիւպէլսսիի դիա-
կը: Արդէն երեկոյեան խաւարն ընկնում էր, երբ մենք դուրս
եկանք անտառից և մօտեցանք լեռան ստորոտին: Նոքա ինձ
քաշ էին տալիս սարն ի վեր, մինչև որ մենք հասանք գլխերի-
լեռանների գլխաւոր բնակավայրը, որ գտնուում էր հէնց լեռնա-
գագաթի տակը, մի նեղ կրճի բերնում: Գագաթի վրայ երևում

էր փարոսը, որ այնքան թանգ էր նստել վրաս և որ շինուած էր
քառակուսի ձևով դարսած գերաններից՝ հէնց մեր գլխավերևը:
Մի փոքր ներքև կար երկու թէ երեք խեղճ խրճթաձև տնակ,
որ անշուշտ, պատկանում էր որևէ հովուի, իսկ այդ բոլորին
այդ սրիկանների ապաստանարանի տեղ էր ծառայում: Այդ
խրճիթներից մէկի մէջ կոխեցին ինձ, կապկպուած և անօգնա-
կան, կողքիս վայր ձգելով ընկերոջս անշունչ մարմինը:

Նւ այսպէս, ես պառկած էի բայց միևնոյն ժամանակ չէի
դադարում մտածալուց, թէ ինչպէս անցնեմ այդ մի քանի ժա-
մը և հասնեմ մի կերպ փարոսին, երբ յանկարծ իմ բանտի
դուռը բացուեցաւ և ներս մտաւ մէկը: Նիթէ ձեռներս կապկը-
պած չլինէին, անշուշտ, ես նորա կողորդից վազ չէի գալ, ո-
րովհետև մտնողը ոչ այլ ոք էր, եթէ ոչ դը-Պամբալը: Նորա
յետեւը կանգնած էին երկու ուրիշ աւազակ, բայց նա հրամայեց
նոցա մի քիչ հեռանալ և դուռը փակեց:

— Անզգամ, գոռացի ես:

— Կամաց, պատասխանեց նա.— Ցած խօսեցէք, որովհե-
տև կարող եմ մեզ ծածուկ ահանջ դնել և ես կարող եմ կեան-
քըս վտանդի ենթարկել: Պէտք է ձեզ մի քանի խօսք ասեմ,
զնդապետ ժեւրար. ձեր բարիքն եմ ցանկանում, ինչպէս և ցան-
կանում էի ձեր հանգուցեալ ընկերոջը: Նորա դիակի մօտ կանգ-
նած խօսելու ժամանակ ես նկատեցի, որ մեզ տեսան և որ
ձեզ գերելն անխուսափելի է: Նիթէ մտքովս անցնէի մի բոլոր
տատանուել, ես էլ այժմ ձեր վիճակին ենթարկուած կլինէի:
Այդ պատճառով իսկոյն ձեզ ձերբակալեցի, որպէս զի աւազա-
կախմբի վստահութիւնը դրաւեմ: Ինքներդ կարող էք հասկա-
նալ, որ ուրիշ ոչինչ չէր մնում ինձ անելու: Չգիտեմ կարող
կլինեմ փրկել ձեզ, բայց յամենայն պէպս, կփորձեմ:

Այս ամենը գործը բոլորովին այլ կերպ էին լուսաբանում:
Պատասխանեցի, որ չգիտեմ, թէ որչափ վստահութիւն կարող
եմ ունենալ իւր խօսքերի վրայ, բայց ես կդատեմ իրեն այսու-
հետև նորա արարքների հիման վրայ:

— Ուրիշ ոչինչ չեմ էլ խնդրում, պատասխանեց նա: Մի
փոքրիկ խորհուրդ էլ տամ, այն էլ ի նկատի առէք. այս բո-
լորիս աւազակախմբի գլխաւորը ձեզ կը կանչէ. ամենին դի-
մադրութիւն անելու ցոյց չանէք, թէ չէ երկու տախտակի մէջ
կզնի և սղոցել կտայ: Չհակաճառէք նորան, ընդհակառակը
տուէք այն բոլոր տեղեկութիւնները, ինչ որ կպահանջէ ձեզ-

նից,— ձեր ազատուելու միակ յոյսը դա է: Եթէ դուք կարողանաք ժամանակ վատապահել, ապա դուք մի այնպիսի բան պատահի, որ ձեզ օգնելու հնար գտնուի: Այժմ ես շտապում եմ: Հետևեցէք ինձ, որպէս զի կասկածներէ տեղիք չտրուի:

Նա ինձ օգնեց, որ վեր կենամ, դուռը բաց արեց և բաւական կոպտութեամբ խրճիթից դուրս հանեց ինձ: Նա և իւր ընկերները առաջնորդեցին ինձ, ճանապարհին աքացիներ չուայելով ինձ, մինչև որ հասանք այն տեղին, ուր նստած էր գլխի իրաների առաջնորդը՝ շրջապատուած իւր դաժան ստորագրեալներով:

«Ժպտուն» Մանուէլօն մի զարմանալի կազմուածք ունէր: Դա չաղլիկ, կարմրերես և ինքնախտահ դէմքով մի տղամարդ էր, լայն, մաքուր ածիլած երեսով և ճաղատ գլխով, — ընտանիքի բարեմիտ ու բարեսիրտ հօր մի կատարեալ տիպար: Մարդերը տեսնում էր նորա անհնդ ժպիտը, դժուարութեամբ էր հաւատում, թէ դա նոյն անզգամ-սրիկան էր, որի անունը սարսափ էր տարածել ինչպէս անզղէական, նոյնպէս և մեր զօրքերի մէջ: Ամենքդ գիտէք, որ անզղիական զօրքի սպայ Տրենտը վերջերը կախել տուեց այդ սրիկային իւր կատարած չարագործութիւնների համար: Նա նստած էր մի խոշոր քարի վրայ և ինձ դիմաւորեց փայլուն ժպտով, կարծես իւր հին բարեկամին էր տեսնում: Բայց և այնպէս ես կարողացայ նկատել, որ իւր մարդկանցից մէկը յենուած էր մի անազին սղոցի վրայ. այդ մէկն այդքն բաւական էր, որ ես խելքի գայի:

— Բարի երեկոյ, դնդապետ ժերար, — արտասանեց նա: Կենք մեզ խիստ երջանիկ ենք զգում այն պատուով ու յարգանքով, որ զօրապետ Մասսենայի հետերդները մէկ-մէկ մեզ ցոյց են տալիս. նախ մեզ այցելում է մայօր Կօրտեքսը, յետոյ զընդապետ Դիւպլիսսին և այսօր՝ դնդապետ ժերարը: Շատ հաւանական է, որ ինքը շարաշախտն էլ կցանկար մեզ յարգել իւր այցելութեամբ: Որքան լսեցի, դուք տեսել էք Դիւպլեսսսին: Կօրտեքսին կարող էք տեսնել այստեղից մի քիչ հեռու ծառին վարսած՝ մեխուած: Այժմ մնում է միայն վճռել, թէ ինչպէս անենք, որ ձեզ հետ էլ ամենապատուական եղանակով գործը վերջացնենք:

Դա, ի հարկէ, շատ էլ հանգստացնող ճառերից չէր. մինչդեռ նա խօսում էր, ժպիտը նորա դէմքից չէր զատուում, և

պէտք է ասել, որ բռներն էլ մի առանձին քնքշութեամբ և սիրալիր եղանակով էր արտասանում: Յանկարծ նա ամբողջ մարմնով առաջ թեքուեց և ես նորա դիմազծերի վրայ լուրջ վճռականութիւն կարգացի:

— Գնդապետ ժերար, ասաց նա, չեմ կարող խօստանալ թէ ձեզ կեանք կչնորհեմ, որովհետև դա մեր օրէնքներից դուրս է, բայց ես կարող եմ ենթադրել ձեզ թեթև կամ զարհուրելի մահուան: Ո՞րը կընտրէք:

— Փոխարէնն ի՞նչ էք պահանջում ինձնից:

— Եթէ կամենում էք թեթև մահով մեռնել, ապա դուք պարտաւոր էք ամենայն անկեղծութեամբ պատասխանել այն հարցերին, որ ես ձեզ կաւաջարկեմ:

Մի անսպասելի միտք յանկարծ լուսաւորեց ինձ:

— Դուք կամենում էք ինձ սպանել, պատասխանեցի ես: Ձեզ համար բոլորովին մէկ է, թէ ինչպիսի մահով կմեռնեմ ես: Եթէ ես պատասխանեմ ձեր հարցերին, ապա դուք թո՞յլ կտաք ինձ, որ ինքս ընտրեմ մահուան այն եղանակը, որով կը կամենայի մեռնել:

— Շատ բարի, պատասխանեց, միայն այն պայմանով, որ դա կատարուի հէնց այսօր մինչև կէս դիշեր:

— Նրդուեցէք, բացականչեցի ես:

— Կարծեմ ձեզ համար բաւական պիտի լինի պարտուզալացի աղնուական խօսքը, պատասխանեց նա:

— Այլա ուրեմն ես ոչինչ չեմ պատասխանի, մինչև չ'երգուէք:

Բարկութեան կարմրութիւնը ողողեց նորա դէմքը և նորա հայեացքը ուղղուեց դէպի սղոցը. բայց իմ ձայնից նա շատ լաւ ըմբռնեց, որ ես խօսում եմ ամենայն լրջութեամբ և որ դժուար բան կլինէր ինձ հնազանդեցնելը: Իւր բաճկոնակի տակից հանեց սև-ոչխարեմու մէջ կարած մի խաչ:

— Նրդուում եմ, — պատասխանեց նա:

Օ՛, ինչ ուրախութիւն զգացի ես այդ խօսքը լսելով: Ինչպիսի մահ էր սպասում Քրանսիական զօրքի լաւագոյն զինուորներից մէկի համար: Պատրաստ էի նոյն իսկ ծիծաղել այդ ընկերի միմիայն այդ մտքից ստացած ուրախութիւնիցս:

— Այժմ հարցեր առաջարկեցէք, — ասացի ես:

— Դուք էլ ձեր կողմից երդուեցէք, որ կասէք միայն զուտ ճշմարտութիւն:

—Իրդուում եմ ազնուականի և զինուորի պատուովս:

Ինչպէս տեսնում էք զարհուրելի երգում տուեցի, բայց ինչ է նշանակում այդ բանը, եթէ համեմատելու լինէինք այն վիճակի հետ, որ սպասում էր ինձ, եթէ այլ կերպ վարուէի:

—Բաւական ազնիւ և միևնոյն ժամանակ զարմանալի հետաքրքրական պայման է, նկատեց Մանուէլօն, գրպանից հանելով իւր յուշատետրը:—Այնքան բարի չէք լինի, որ ձեր հայեացքը ֆրանսիական բանակի կողմը դարձնէիք:

Հետևելով նորա ձեռքի ուղղութեանը, ես շուռ եկայ և հովտում, մեր ոտների տակ փռուած բանակին նայեցի: Չնայելով որ բանակը բաժանուած էր մեզնից տասնհինգ մղոն տարածութեամբ, բայց օդը մինչ այն աստիճան մաքուր ու ջինջ էր, որ ամենամանր բաներն անգամ կարելի էր նկատել: Պարզ տեսնում էի քառակուսիների ձևով դասաւորուած մեր վրանները և խրճիթները, հեծելազօրի ամբուստիւնները և սևին տուող բծեր, որ մեր տասը հրետանու տեղն էր որոշում: Որչափ տխուր մտքեր անցան գլխովս, երբ աչքս ընկաւ իմ հիւանալի հեծելազօրի գնդի վրայ, որ այնտեղ՝ ներքէն սպասում էր ինձ և միևնոյն ժամանակ գիտակցում էի, որ նոքա այլ ևս երբէք իրենց զնդապետին պիտի չտեսնէին: Այդ գնդից միմիայն մի փոքրիկ վաշտ բաւական էր ինձ համար, որ այս բոլոր աւազակներին ջնջէի աշխարհիս երեսից: Աչքերս արտասուքով լցուեցան, երբ ես սևեռած հայեացքով դիտում էի մեր բանակի մի անկիւնը, որտեղ գտնուում էին, ինչպէս հաստատ գիտէի, ութհարիւր հոգի, որոնցից իւրաքանչիւրն ամենայն պատրաստականութեամբ իւր կեանքը զո՛հ կբերէր իւր զնդապետի փոխարէն: Բայց տըխրութիւնս միանգամից փարատուեցաւ, երբ տեսայ Տօրրես-Վեգրասի գլխաւոր բանակատեղից բարձրացող ծուխը, այնտեղ էր գտնուում Մասսենան և, Աստուծոյ ողորմութեամբ, այս գիշեր հէնց իմ առաքելութեանս նպատակը իրագործել կկարողանամ: Ոգևորութեան և հպարտութեան զգացումը թալրտաց սրտիս խորքում: Կ'կամենայի այդ բոլորին որոտընդոտ ձայն ունենալ, որպէս զի գոռայի նոցա.—«Տեսէք, թէ ինչպէս պիտի մեռնի էտիէն Ժերարը Կլօզելի բանակի փրկութեան համար»:

Շատ ցաւալի էր, ի հարկէ, գիտակցել որ այդպիսի մի ազնիւ գործ պիտի շուտով կատարուէր, բայց աւելի ցաւալին այն էր, որ մէկը չի լինի, որ պատմէր յետոյ այդ մասին:

—Այժմ տեսնում էք, ասաց աւազակների պարագլուխը,

բանակը և Կաիմբրա տանող ճանապարհը: Նա ամբողջապէս բռնուած է ձեր ֆուրգօններով և հիւանդանոցի սայլակներով: Այդ բոլորը չէն ապացուցանում, որ Մասսենան պատրաստուած է նահանջելու:

Կարելի էր տեսնել երկար շարէշար ֆուրգօնների սևին տուող դիծը և ժամանակ առ ժամանակ նորան հետևող գումարտակի զէնքերի փայփուրը: Չխօսելով իմ խոստմանս մասին, ոչ մի վատութիւն արած չէի լինիլ, եթէ համաձայնէի այն իրողութեան հետ, ինչ որ արդէն շատ պարզ էր:

—Նահանջելու դիտաւորութիւն ունի, պատասխանեցի ես:

—Դէպի Կաիմբրա՞:

—Կարծում եմ, որ այո:

—Իսկ ինչ պիտի անեն Կլօզելի բանակի հետ:

Նս թօթուեցի ուսերս:

—Դէպի հարաւ տանող բոլոր անցքերը փակ են, ոչ մի հնարաւորութիւն չկայ նորան իմաց տալու այդ մասին: Եթէ Մասսենան նահանջէ, այն ժամանակ Կլօզելի ամբողջ բանակը կորուստի կմատնուի:

—Պէտք է գլուխ խոնարհէ իւր ճակատագրի առաջ, ասացի ես:

—Ո՞րքան մարդ ունի նա:

—Կարծում եմ, մօտ տասնհզորս հազար հոգի:

—Իսկ հեծելազօ՞ր:

—Մօնրբիօնի գումարտակից մի վաշտ:

—Ի՞նչ զնդեր են:

—Որսորդական չորրորդ, հուսարների իններորդ և զրահաւորների գունդը:

—Բոլորովին իրաւացի է, ասաց նա, նայելով իւր յուշատետրին:—Խորհուրդ կտայի ճշմարտութիւնը խօսել և թող երկինքը ձեզ օգնութեան հասնէ, եթէ այդպէս չէք անիլ:

Յետոյ վաշտ-վաշտ հարց ու փորձ արեց ամբողջ բանակի մասին, մանրամասն տեղեկութիւններ խնդրելով իւրաքանչիւր գնդի մասին:

Աւելորդ է, ի հարկէ, ասել, որ աւելի շուտով լեզուս արմատից հանել կտայի, քան այդպիսի տեղեկութիւններ կտայի, եթէ առաւել մեծ նպատակ չունենայի: Պատրաստ էի պատմել ամեն ինչ, ինչ որ կհաճէր, միայն թէ փրկել կարողանայի Կլօզելի բանակը:

Վերջապէս յուշատետրը խփեց և յետոյ ծոցի գրպանը դրեց կրկին:

—Շատ շնորհապարտ եմ ձեզ այս տեղեկութիւնների համար, որ վաղն իսկ կհաղորդեմ լօրդ Վելլինգտօնին, ասաց նա: Դուք կատարեցիք ձեր խոստումը, այժմ հերթն իմա է: Ի՞նչպէս կկամենայիք մեռնել: Իբրև զինուոր, դուք, իհարկէ, կգերադասէիք թէ ձեզ գնդակի բռնէին. բայց շատ շատերն են կարծում, որ Մետրօզալի գագաթից անդունդ ցատկն աւելի թեթև մահ է պատճառում: Շատերն են այս վերջին եղանակն ընտրել, միայն, դժբաղտաբար, մենք ապագայում հնարաւորութիւն չենք ունեցել ստուգելու նոցա ասածը: Կայ և սղոց, բայց այդ ձևը ժողովրդականութիւն չէ վայելում: Մենք, իհարկէ, կարող էինք և կախել ձեզ, բայց դորա հետ մի քանի անյարմարութիւններ են կապուած, որովհետև դորա համար պէտք կլինէր անտառ իջնել: Բայց և այնպէս խոստումը խոստում է մնում և մենք ոչ մի ջանք չենք խնայիլ, որ ձեր ցանկութիւնը կատարենք:

—Դուք ասացիք,—պատասխանեցի ես, որ պէտք է մինչև կէս զիշերը մեռնեմ: Ուստի իմ ցանկութիւնս է, որ այդ բանը կատարուի ուղիղ մի բոլէ պակաս զիշերուայ տասներկուսից:

—Բարի, հիանալի, ասաց նա: Կեանքի հետ այդքան սերտ կապուած լինելն, ի հարկէ, մի փոքր երեսխայամութիւն է, բայց և այնպէս ձեր ցանկութիւնը կկատարուի:

—Իսկ ինչ վերաբերում է մեռնելու եղանակին, աւելացրի ես, ապա կասեմ, որ ցանկանում եմ այնպէս մեռնել, որ արար աշխարհն այդ բանը տեսնէ: Դրէք ինձ այն փայտակոտի վրայ և կենդանոյն այրեցէք ինձ, ինչպէս մինչև այժմ անում էին նահատակներին և սրբերին: Կա հասարակ մահ չի լինի, այլ այնպիսի մի մահ, որին ինքը կայսրը կարող էր նախանձել:

Այս միտքը, երևում էր, նորան մեծ հաճոյք պատճառեց:

—Ինչու չէ, պատասխանեց նա:—Եթէ Մասսենան ձեզ ուղարկել է մեզ լրտեսիլու համար, ապա նա կկռահէ և այն, թէ ինչ է նշանակում լեռան զագաթի վրայ փայլող կրակը:

—Իսկապէս այդպէս էլ է, ասացի ես:—Դուք շատ լաւ կռահեցիք իմ միտքս: Նա կհասկանայ և ամենքն էլ կզիտեանան, թէ ես մեռայ այնպէս, ինչպէս վայել է զինուորին:

—Իսրա դէմ ոչինչ չունեմ, ասաց աւազակպետը իւր զգուելի ժպտն երեսին:—Ես կուղարկեմ ձեր խրճիթը այժմ միս և գինի: Արևն արդէն մայր է մտնում, որովհետև արդէն ժամը ութի մօտերն է: Պատրաստուեցէք մի չորս ժամից յետոյ մեռնելու:

Ստիպուած էի այս հրաշալի աշխարհին հրաժեշտ տալ: Ներքև, դէպի հովիտը նայեցի, որ պլլուած էր ոսկեգոյն ծխի քուլաների մէջ, որտեղ արևի մայր մտնող շողերը լուսաւորում էին ոլորապտոյտ ծագոյի ջրերը և փայլփլում էին անգղիական փոխադրող նաւերի սպիտակ առագաստների վրայ:

Այդ բոլորը չափազանց զեղեցիկ էր և ցաւալի էր բաժանուել դոցանից. բայց, իհարկէ, առաւել զեղեցիկ, վեհ բաներ կան: Մահ՝ ուրիշների փոխարէն, սլատիւ և պարտաճանաչութեան զգացում, ազնուամտութիւն և սէր դէպի ընկերները,— ահա այն զեղեցիկութիւնները, սր աւելի փայլուն են, քան այն բոլորը, ինչ որ աչքով կարող ենք տեսնել: Ես հրճուանք էի զգում իմ ազնիւ արարքիս վերաբերութեամբ և մի փոքր ժամանակ ընկայ մտքերի ծովը, թէ արդեօք, երբեկիցէ, մէկը կարող կլինի իմանալ, թէ ինչպէս Կլօգելի բանակը փրկող փարոսի մէջ տեղը պահեցի՝ մեռնելու համար: Եւ յոյս ունէի, որ կգտնուի մէկը և աղօթում էի այդ մասին. երևակայում էի, թէ ինչպիսի սփոփանք կլինի դա մօրս համար, ինչպիսի օրինակ կլինի ամբողջ բանակի համար և թէ ինչպէս կհարստանան ինձնով իմ հուսարներս: Երբ վերջապէս դը Պօմբալը խըրճիթս եկաւ, հետը կերակուր ու գինի բերելով, իմ առաջին խօսքս ու խնդիրս նորան այն էր, որ մեռնելուցս անմիջապէս յետոյ տեղեկադիր զրէ և ուղարկէ Ֆրասիական բանակը: Նա ոչինչ չարտասխանեց: Բայց այն միտքը, թէ իմ սիրագործութիւնս անյայտ չի մնայ, ինձ ախորժակ պարգևեց և ես մեծ հաճութեամբ կերայ ընթրիքս:

Այդպէս նստած էի մօտ երկու ժամ, երբ դուռն ոտըից բացուեցաւ և ներս մտաւ աւազակների պարագլուխը: Չորս կողմա թանձր խաւար էր, բայց նորա մօտ կանգնած էր առագակներից մէկը լապտերը ձեռին և ես տեսնում էի, թէ ինչպէս էին փայլում Մանուէլօյի աչքերն ու ատամները, երբ նա դիտում էր ինձ:

— Պատրաստ էք, հարցրեց նա:

— Իե՞ռ ժամանակը չէ հասել:

— Դուք դեռ ևս պնդում էք, որ վերջին ըրպէին միայն կատարուի:

— Խոստումը խոստում է մնում:

— Շատ բարի: Թող այդպէս էլ լինի: Մենք մեր մէջ մի փոքրիկ գործ պիտի վճռենք, որովհետև իմ ստորագրեալները մէկը մի փոքր սխալ է գործել: Մեր մէջ տիրում է խիստ օրէնքներ, որը չի փոփոխուիլ և ոչ մէկի համար, որը կարող է հաստատել և դը-Պոմբալը: Իսկ դուք, դը-Պոմբալ, կապկպեցէք նորան և դնել տուէք խարոյկի վրայ, ես յետոյ կգամ տեսնելու, թէ ինչպէս է մեռնում նա:

Դը-Պոմբալն ու լապտերը ձեռքին մարդը խրճիթ մտան այն ըրպէին, երբ աւագակապետի քայլերը հեռանում էին խրճիթից: Դը-Պոմբալը փակեց դուռը:

— Գնդապետ ժերար, ասաց նա, դուք պէտք է հաւատ ընծայէք այս մարդուն, որովհետև նա ևս իմ համախոհներին թուին է պատկանում: Մենք կամ խաղը կտանենք և կամ բոլորովին տանուլ կտանք: Ձեզ դեռ ևս յոյս կայ ազատելու: Բայց ես խիստ մեծ վատնգի եմ ենթարկում կեանքս, ուստի և ձեզանից վերջնական խոստում պիտի ստանամ: Եթէ մենք ձեզ փրկենք՝ կերաշխատութեք, որ մեզ բարեկամարար կընդունեն ֆրանսիական բանակի մէջ և որ ամեն ինչ մոռացութեան կտրուի:

— Իրաշխատորում եմ:

— Իսկ ես վստահանում եմ ձեր խօսքին: Այժմ արագ, արագ շարժուեցէք, որովհետև ժամանակ կորցնելու տեղը չէ: Երբ այդ հրէջը վերադառնայ, սպա երեքս էլ զարհուլելի մահով կմեռնենք:

Չարմանքով էի դիտում, թէ ինչ էր անում նա: Մի երկար թոկ առած փաթաթում էր իմ հանգուցեալ ընկերոջ դիակը: փաթաթելուց յետոյ բերանը թաշկինակով կապեց, այնպէս որ նորա դէմքը համարեա բոլորովին ծածկում էր:

— Պառկեցէք այստեղ, բացականչեց նա ինձ տեղաւորելով այն տեղ, ուր մի քիչ առաջ դիակն էր գտնուում: Դուրսը չորս հոգի են սպասում ինձ, որոնք այն բանը պիտի տանեն խարոյկի վրայ դնելու: Այս ասելով նա դուռը բաց արեց և հրամաններ տուեց: Իսկոյն ներս ընկան մի քանի աւագակ, որոնք և դուրս տարան Դիակիստիին: Իսկ ինչ վերաբերում էր ինձ, ես շարունակում էի պառկած մնալ յատակի վրայ, յուզուած բոլորովին յոյսերից և անորոշութիւնից:

Հինգ ըրպէից յետոյ դը-Պոմբալն ու իւր մարդիկը վերադարձան:

— Դուք պառկած էք խարոյկի վրայ, ասաց նա: Եւ ես դրագ կգամ ում հետ կամենաք, որ դուք էք այնտեղ և որ դուք այնպէս պինդ էք կապկպուած և բերաններդ այնպէս ամուր է փակուած, որ չէք կարող ոչ խօսել, ոչ էլ շարժուել: Այժմ միայն մնում է Դիակիստիի դիակն առնել ու տանել Մերօդալի դագաթից անդունդը նետել:

Նոցանից երկուսը բռնեցին գլխիցս, երկուսը ոտքերիցս և խրճիթից դուրս հանեցին իմ անխօս ու անշարժ մարմինս: Ազատ օդն ելնելով, քիչ մնաց, որ զարմանքից բացականչէի: Լուսինը բարձրացել, կանգնել էր ճիշդ փարոսի վերելք և իւր արծաթափայլ լուսով լուսաւորում էր նորա դագաթին պառկած մարդու դիմադծերը: Բոլոր աւագակները գտնուում էին կամ բանակում, իրենց որձերում և կամ փարոսի շուրջը, բայց նոցանից և ոչ մէկը չկանդնեցրեց մեր փոքրիկ խմբակը և հարց ու փորձի չենթարկեց: Դը-Պոմբալն առաջնորդում էր նոցա դէպի անդունդը: Երբ մենք բոլորովին դագաթը հասանք և մեզ այլ ևս չէին կարող տեսնել, ինձ նորից իրաւունք տուին օտքի կանգնելու: Դը-Պոմբալը մատնացոյց արեց նեղ, օձապտոյտ կածանը:

— Ահա ներքև տանող ճանապարհը, ասաց նա և իսկոյն աւելացրեց:— Տէր իմ Աստուած, այս ինչ բան է:

Ներքև՝ անտառի միջից զարհուլելի դոռոց լուսեցաւ:


Ես տեսնում էի, թէ ինչպէս էր դը-Պոմբալը դողում սարսափահար եղած ձիու պէս:

— Այն սատանի ծնունդն է, շինչաց նա: Նա մի ուրիշի հետ էլ նոյն եղանակով է վարում, ինչպէս ինձ հետ վարուեցաւ: Բայց սպասելու ժամանակ չէ, յառաջ, յառաջ և թող Աստուած ինքը օգնութեան հասնէ մեզ, եթէ մենք նորա ձեռքն ընկնենք:

Հերթով նեղ կածանից սկսեցինք իջնել. դա մի արահետ էր, որով միայն վայրի ամերն էին երթնելու: Ժայռի ստորոտի մօտ մենք նորից անառն ընկանք: Յանկարծ մեզ ամբողջապէս լուսաւորեց վերևից թափուող դեղին լոյսը և փայտասիւնների մուշտ ուրուագծերը յանկարծակի դուրս սողացին խաւարի միջից: Նոքա վառել էին մեր յետևից փարոսը: Մինչև անգամ այն տեղից, ուր մենք էինք կանգնած, կարելի էր տեսնել բոցերով պատած մարմինը և գվերիլիասների մութ

մարմնագծերը, որոնք պար էին բռնել խարոյկի շուրջը և կատարեալ մարդակերները պէս ունում էին: Ա՛, չէք իմանում թէ ինչպիսի կատաղութեամբ բռունցք էի թափ տալիս այդ ըզլային այդ շները դեմ, երգում ուտելով, որ անպատճառ երբեքից, իմ հուշարների օգնութեամբ աշխարհի երեսից ջնջում նոցա հետքը:

Իը-Պոմբալը գիտէր բոլոր պահակները և կածանները, որ ոլորում անցնում էին անտառի միջով: Բայց, որպէս զի այդ սրիկաներին չհարգիպէինք, մենք պարտաւոր էին պտոյտներ անել բուռնների մէջ և աւելորդաբար մի քանի մղոն տեղ էլ ոտքի տակ տալ: Բայց միևնոյն ժամանակ և ինչպիսի ուրախութեամբ կանցնէի աւելի երկար ճանապարհ, որպէս զի միայն տեսնել կաբողանայի այն, որ հոգով ցանկանում էի և որ այդ ըզլային արդէն աչքիս առաջն էր: Նրեի, տուաւօտեան, ժամը երկուսը կլինէր, երբ մենք, վերջապէս, կանգ առանք բլրակներից մէկի լերկ լանջի վրայ, որից անցնում էր մեր ուղին: Յետ նայելով մենք տեսանք փարոսի կարմրագոյն բոցը. կարելի էր ենթադրել թէ հլարբուղիս էր ելնում Մերօգալի բարձր գագաթից: Շարունակելով դիտել հեռուն, ես այնպիսի մի բան տեսայ, որից սասցած ուրախութիւններիցս բացականչեցի և գետին փռուեցայ. այլ ևս անկարող լինելով հանգարտ ու հանգիստ կանգնել մինչ այն աստիճան էր յուզումս ու հրճուանքս: Հեռու, հեռու հարաւային հորիզոնի վրայ դողդողում և առկայծում, մերթ յանկարծակի մարում և մերթ նորից բոցավառում էր մի մեծ դեղին լոյս, — բայց դա տան մէջ վառուող լոյսի կամ մեծ աստղի փայլ չէր, այլ այն պայմանական պատասխանփարոսը, որ ապացուցանում էր թէ կլօզելի բանակն արդէն տեղեկութիւն ունէր այն բանի մասին, ինչ որ պէտք է էտիէն ժեբարը հաղորդէր նորան:



Տրատարակութիւններ

39 Ի. Յարութիւնեան, Հայոց զերը 1893	1	50
30 Իլի. Կ. Բեհրուզեան, Ծուխ, 1893	—	15
41 Ռանգարէ, Իման, վէպ թարգմ. Յ. Լալայեանի	—	25
42 Արեւը Այնո, Գուրգի լեան, 1893	—	20
43 Ճաղարեղեան Յ. Հայոց լեզու և տ. 1904	—	30
44 Խրիմեան Հայրիկ, ժամանակ 1895	—	15
45 Սպիլիկ, Ածարած Մօնի թ. Ի. Յարութիւն. 1885	—	15
46 Բակ. (Բարդէս վ.) Կրկնիկա 1896	—	10
47 Պետաւրեցցի, Լինհարդ և Գերտուրգ. 1896	1	50
48 Մեղրիսեղեկ արեւոյ. Մուրատեան, Պետրոս Հանչեան պատկերով. 1897	—	50
49 Թ. Ա խոհարարուհի, Բ. տպ. ճոխացրած 1904	—	50
50 Լուամյ, գրական հանդէս 1896 Ա. գիրք	2	—
51 Լուամյ	2	—
52 Լուամյ	2	—
53 Լուամյ	2	—
54 Լուամյ	2	—
55 Լուամյ	2	—
56 Լուամյ	2	—
57 Լուամյ	2	—
58 Լուամյ	2	—
59 Լուամյ	2	—
60 Լուամյ	2	—
61 Լուամյ	2	—
62 Լուամյ երկամսեայ հանդէս 1902 տարեկան	6	—
63 Լուամյ	6	—
64 Լուամյ	6	—
65 Լուամյ ամսագիր 1905 տար. բաժնի	8	—
66 Յ. Պարոնեան, Ծիծաղ պատկերով. 1899	1	25
67	—	50
68	—	75
69 Ի. Յար. Ստեփանոս Պալասանեան	—	25
70 Կ. Տեր-Կարապետեան, Խաչատուր Արդիեան. սոպո.	—	60
71 Ի. Յար. Աշակերտի յուշատետրը	—	30
72	—	30
73 Յար. Թումանեան, Մեկը Խուսի	—	25
74 Մ. Եօկայի, Ուրբացողը, թարգ. Իս. Յար.	—	20
75 1901 Ս. Էջմիածնի թ.Ձ դարագարը	—	25
76 Եր. Շահագլու, Միկտիչ Կոն.	—	60
77 Կարալենկո, Կոյր երաժիշտը թարգմ. Մուշէ վրդ.	—	60
78 Զորբորդ դարու հայ եկեղեցին	—	20
79 Եր. Շահագլու, Կոր-Նախիջեանի ս. Խաչ վանքը	—	40
80 Ի. Յար. Իմ օրագիրը	—	20
81 Մեծ Կերտէս	—	25
82 Գ. Խաչկոնց, Հայոց կրօն. բանաստեղծութիւնը	—	60
83 Ի. Յար. Կին վիպագիր Ե. Սպիլի	—	10
84 Օր. Ն. Արանեան, (թարգմ.) Սև հացեր. Բ. տ.	—	5
85 Կարալենկո. Դասաստանի օրը. թարգմ. Մուշէ վրդ.	—	40
86 Կ. Կոստանեանց. Հարժի տարեգրութիւնը Հայոց Աջ. 1902.	—	20
87 Կար. Վ. Յովսէփեան. Մանրանկարչութեան արուեստը Հայոց Աջ 1902.	—	—
88 Կերտէս Մեծի յաջորդներ 1902	—	20
89 Մ. Գոյրիկ. Աշկաշ, թարգմ. Մուշէ վրդ.	—	25
90 Բուչակ Նահապետի երգերը. Յով. Թադէոսեան	—	15
91 Սահակ Պարթև	—	25
92 Այուշը, ժօրժ Կարաբրի. թարգմ. օր. Նուարդ Արանեանց. Բ. տպ.	—	5
93 Վարժապետը. թարգմ. Լ. Մ.-Ա.	—	15

94	Հազարան Բլրուլ Ե. Թումանեանց	— 30
95	Պատմական պատկերներ. Եր. Շահադիդի 1903	— 60
96	Ժ. Ժ. Ռուսո. Էմիլ. Ի. Թ. Իս. Յարութիւն. 1904.	— 50
97	Խորէն արք. Գալֆայեան ևՆար. Աղցմբը. Եր. Շահադիդի. 1904.	— 60
98	Հերոսարատ. Լուգվիգ Ֆուլցայի. Թարգմ. Տ. Վ. 1904.	— 50
99	Կանոնք ժողովոց. Մ. Ա. 1904	— 50
100	Ուղեղի նորոգումը. Ֆ. Գիկմէլի Թարգմ. Օր. ՆուարդԱղանեան, 1904	— 5
101	Գլթուլթիւն. Թարգմ. օր. Ն. Աղանեան 1904	— 5
102	Գ. Ե. Սրուանձտեանցի երկասիրութիւններ. Ի. Համով—Հոտով 1904.	1 25
103	Ալէմգիր վէպ Վ. Փափազեանի. 1904	— 50
104	Սուտի հոգեբանութիւնը. Գար. Ենդ. 1904	— 10
105	Հայրեր և զաւակներ. Ի. Տուրգենևի. Թարգմ. Մուշէ. վ. 1904	— 75
106	Կոնան Դոյլ. Բանակն ինչպէս ազատեցի. Թարգմ.Տ. Վ. 1904	— 15
107	Ազերֆէզա. վէպ Վ. Փափազեանի	— 60
108	Ֆր. Գրիլլերէլ. Նոր Կուռք. Թարգմ. Տ. Վ. 1905	— 30
109	Կար. Եղեան. Ս. Էջմիածնի Մայր Աթոռի և Ռուսաց կառ. յա- րաբերութիւնների ծագումը. 1905	

Մամուլի տակ են

110	Դիւան Հայոց պատմութեան, Գիրք Ը. և Թ.
111	Եղիշէի պատմութեան ընդերը.
112	Հայ Գրչագիրներ.
113	Զ. Ռիչարդսոն. զրբերի ընտրութիւնը

Պատկերներ

1	Պետրոս Շանչեան	— 10
2	Յակովբ Պարոնեան	— 10
3	Արգար Յովհաննիսեան	— 10
4	Աւետիք Ղուկասեան.	— 10
5	Գարեգին եպս. Սրուանձտեանց	— 10
6	Լուսինի պոստկարտ.	— 5
7	ս. Գրիգոր Լուսաւորչի իւղաներկ մեծադիր պատկեր թղթի վերայ	3 —
8	Նոյնը կտակ վերայ.	15 —

ԳԻՆՆ Է 15 ԿՈՊԵԿ

« Ազգային գրադարան



NL0166612

